ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԻՐԱՊԻՑ ԵԼՆԵԼՈՒ ՏՈՆԻՆ

(5 հունիսի, 1999 թ.)

Այսօր նվիրական այս ուխտավայրում, հիշատակում ենք մեր հավատքի Հայր Ս. Գրիգոր Լուսավորիչի կյանքի պատմությունը, թե ինչպես Լուսավորիչ նետվեց խոր վիրապ և այնուհետև, կամքն Աստծո, դուրս բերվեց Քրիստոսի Սուրբ Ավետարանը քարոզելու և մեր ժողովրդի կյանքում քրիստոնեական հավատքը որպես պետական, պաշտոնական կրոն հաստատելու համար: Այսօր մեզ համար փաստորեն «Ելն ի Վիրապեն» տոնը հաղթանակի տոն է, մեր ժողովրդի համար այս օրը հավատքի, հաղթանակի օր է, և հաղթանակի խորհուրդը խտացրել է այս նշանի՝ Լուսավորչի Ս. Աջի մեջ, որը դարեր շարունակ առաջնորդել է մեր ժողովրդին, միշտ ամուր պահելով նրա հավատքը՝ գամված այս Աջին, և պատահական չէ, որ մեր հայրերից Դավրիժեցին արձանագրել է, թե յուրաքանչյուր հայի հոգին կապված է Լուսավորչի Աջին:

Այս Աջը, թերևս առաջին անգամ լինելով, խորհրդային տարիներից այս կողմ դուրս է բերված, որպեսզի մեր հավատացյալ ժողովուրդը երկրպագություն մատուցի և օրհնություն ստանա: Ուրեմն, օրհնության արարողությունից հետո յուրաքանչյուրդ հնարավորություն պիտի ունենա երկրպագություն մատուցելու այս սրբությանը, հաղորդվելու այս սրբությունից ճառագող օրհնությանը, նորոգելու ուխտը, դառնալու համար Քրիստոսի Ավետարանի քարոզիչը, դառնալու համար մեր ժողովրդի կյանքի աղն ու լույսը:

Յուրաքանչյուրս նաև պիտի գանք նորոգելու մեր հավատքը, հաստատուն դարձնելու Լուսավորչի կողմից հռչակված և մեր ժողովրդի հավիտենականությունը երաշխավորող քրիստոնեական լույս հավատքը: Ուրեմն, իմ մաղթանքն է և աղոթքը, սիրելիներ, այս պահին, երբ մենք հիշատակում ենք մեր առաջին Հայրապետի՝ տոնը՝ Ելն ի Վիրապեն, մեր հայացքը ուղղում ենք դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր այս պահին մեր Լուսավորչի գահին բազմած է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Բարձրացնենք մեր հոգու հայացքը առ Աստված և անկեղծ, սրտաբուխ աղոթք վերառաքենք առ Աստված՝ Հայոց Հայրապետի առողջության համար, որպեսզի Տերը բարի ապաքինում և արևշատություն պարգևի մեր Հայրապետին, նրա ձեռքերի մեջ հաստատուն պահվի Լուսավորչի Աջը և առաջնորդի մեր ժողովրդին դեպի բարին և դեպի գեղեցիկը, դեպի 2001 թվական, դեպի քրիստոնեական մեր հավատքի պետական պաշտոնական կրոն հռչակման 1700-ամյակ: Թող Տերը բարգավաճում և զորացում պարգևի աշխարհին Հայոց ու մեր հավատավոր ժողովրդին: